

զլուխ բարձրացուցած: Սուր բռնել սոր-
ված են, իրենց զինուորական յատկու-
թիւնները զարգացուցած և զիւսանակա-
կան կարողութեանց ճամբայ բացած: Բա-
նաստեղծի մը միակ գերագանց երգը «La
Marseillaise» սրտեր ցնցած է և դէպ ի
յաղթանակ առաջնորդած ազատատենչ հո-
գիները: Յիւսանական յեղափոխութիւնը
նախորդ դարու պատկանած մեծ զրագէտ-
ներու ազդեցութեամբ իրագործուեցաւ:

Մեծ է զրականութեան ուժը, և բարդ

անոր զիմագիծը: Իր ներգործութեամբ
պողպատէ հողիներ կը պատրաստուին,
և միեւնոյն ատեն բիրտ զգացումներ կ'ազ-
նուանան:

Ազգ մը որքան մեծ թիւով ճշմարիտ
մշակներ ունի, և որքան ժողովրդական
խաւերու մէջ զիտակից ընթերցողներու
քանակ՝ այնքան զօրաւոր է և վստահ իր
յաղթանակին:

Ի՛րն են հայրենիք և ազատութիւն:
Նա անմահ է:

Վ. ԱՂԳԻՆ — ԿՈՐԻՒՆ



ՅԻՇԷ՛ ՄԻ՛ ՄՈՌՆԱՐ

Երբ անսովոր աղմուկով, դուստր իմ, տեսնես փողոցին մէջ
խօսական կայթն ու տարազ՝ թ' եկած է նոր բարեկենդան,
Յիշէ՛ վիճակն ողորմագին թըշուառութեան բիւր զոհերուն,
Մի՛ մոռնար հիւանդանոցն՝ ուր կան մահուան դէմ կռուողներ:

Երբ գեղադէմ, անուշաբոյր և վայելուչ արդուզարդով
Նաղելով ելլես ի պար ճոխ և հընչուն սրահներու մէջ,
Պահ մը ետիդ դարձիր մըտքով, և պիտի մօտ գըտնես դարձեալ
Թըշուառութիւնն որ կու լայ՝ սանդուխներուն քով կըծկըտած:

Երբ վառվրուռն աչքերուդ մէջ սիրոյ ցուրբերն առաջին
Արփենի ճաճանչներուն պէս դան ժըպտիլ գեղածիծաղ,
Միտ դիր սըրտիդ, յիշէ՛ որ սէրն աղքատին չի ժըպտիր երբեք:

Երբ ողջ ժամեր պըշրանքիդ զոհել կանգնես հայելոյն դէմ,
Գիտցիր որ մին թէ միայն վար գընես գըլխուդ դոհարներէն՝
Ո՛հ, բա՛ւ է մէկն այն՝ մահամերձ հիւանդին տալ առողջութիւն:

Թարգ. Հ. Թ. ԹՈՄՍԵԱՆ

ԿՈՒՆԵՐՐԻՆԵՒ



ՀԱՅՐ ԱՐՍԷՆ ՂԱԶԻԿԵԱՆ

Գըրիչդ առիր արծիւներու փետուրէն
Ուղիմական լեռներուն,
Արտագրութիւնն ալ երկերուդ բիւր հազար
Ըրին քեզ գանկը դարուն:

Աշխատանքէ ոչ մէկ ատեն չըվախցար
Ու քու առջեւ ան դողաց,
Եւ քալեցիր անմահութեան ճամբայէն՝
Դէպ ի երկինքն ու Աստուած:

Սիրեցիր Սէրն ու Հըսկայ վիշտն հոլանի
Ուղեկորոյս մարդկութեան,
Ու խըլեցիր աստեղազարդ երկինքէն
Վառող ցուրբեր յաւիտեան:

Ու երբոր օր մ'ալ Հոմերի քով նըստած
Ունկընդրեցիր խօսքն անոր,
Թըրթըռացին սըրտիդ խորքին մէջ զըւարթ
Հազար թեւեր նորանոր:

Ու քընարիդ ձայնն ըզգեցաւ յանկարծոյն
Հըրապուրիչ պատմութեան,
Հիացումով անոր մօտիկ բիւր մարդեր
Ուխտաւորի պէս եկան:

Իայց մոռացօնքն որչափ ըլլայ ապիրատ
Պիտի ի զո՛ւր տառապի
Քեզ բաժնալու համար մեր տաք սրտերէն՝
Ուր կեանքիդ շուքը կ'ապրի:

Յ. ԴԱԻԹԵԱՆ

ՄԵՏՈՒՍԱ

Մենք հըմայուած ճամբորդներ ենք, ես ու դուն,
Որ կը քալենք եղերքն ի վար ովկեանին,
Դէպ ի կախարդ մեր հանգըրուանն անանուն.
Ուխտաւորներ ճշմարտութեան խորանին:

Մենք որ բոլոր ուշիմ հարցերն հարցուցեր,
Ամէն տաճար այցելեր ենք անձկագին,
Ու սերտեր ենք ուսումներու ամէն սեռ,
Հիմա վշտով մենք վերջ կու տանք մեր հարցին:

Բընութիւնն է բիրտ ու հըզօր Մետուսա,
Որ կ'օրրէ մեզ նայուածքներով հոգեթով,
Ու մենք դիւթուած՝ տըրտում՝ դռնէն մարմա-
[րեայ

Ներս կը մանենք հարցումը մեր մոռնալով...

ՍՓՈՓԱՆՔ

Թող այս ըլլայ քեզ ըսփոփանք, ով վըհատ,
Ու վերքերուդ համար ըլլայ բալասան.
Աշխարհի մէջ ապրող և ոչ մէկ անհատ՝
Ունի պատնէշ կըսկիծին դէմ ու մահուան:

Վէրքերըդ բաց համբոյրին դէմ արեւուն,
Քամին դէմ, անձրեւին դէմ և ձիւնին.
Երբ ընդունայն՝ ալ կը տըխրիս պարտասուն,
Գըլուխիդ դիր հողի կըծքին զովագին:

Ամէն կըռնակ կը ժառանգէ մէկ հատ քար.
Ամէն շահի կը վիճակուի լոկ կորուստ.
Ալ կուրծք չըկայ կուրծքին նըման սա դալար՝
Մեղքի հագուստ, վերքի կապուստ և հարուստ...

ՎԱՏԻՄ ՍՕՅԵԱՆ